ԽԱԴԱՎԱՆՔ-ԽԱԹՐԱՎԱՆՔ

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ
ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹԵԱՆ

Հին Արցախ-Խաչենի Առանձահիկ նախարարական-իշխանական տունը 12-րդ դարի երկրորդ կէսին բաժանուել էր երեք ճիւղի, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր բնագաւառը, վարչա-քաղաքական բաժանումը եւ հոգեւոր-մշակութային կեդրոնները: Այդ նորաստեղծ իշխանութիւններն էին. Ներքին Խաչենինը՝ Խոխանաբերդ իշխանանիստով եւ հոգեւոր կեդրոն Գանձասարով, Կեդրոնական Խաչենինը կամ Հաթերքինը՝ Հաթերք իշխանանիստով եւ հոգեւոր կեդրոն Դադի վանքով, եւ Վերին Խաչենի կամ Ծարայ իշխանութիւնը՝ Ծար գիւղաքաղաքով ու Խադավանք հոգեւոր կեդրոնով:

Ճիշդ է, 13-րդ դ. առաջին կէսում Հաթերքի իշխանութիւնը, հզօր իշխան Վախտանգի մահից յետոյ, սպառուել էր, եւ իշխանութեան տարածքն էլ բաժանուել էր ներքին խաչենցիների ու ծարեցիների միջեւ, որի շնորհիւ Ծարին անցած առաքելադիր Դադի վանքը պէտք է դառնար իշխանութեան հոգեւոր կեդրոնն ու տոհմական տապանատունը, սակայն սա չխանգարեց, որպէսզի Խադավանքը մնար յարգուած եպիսկոպոսանիստ՝ եւ վայելէր Ծարայ իշխանութեան պայազատների յատուկ հոգածութիւնն ու խնամքը: Աւելին, աղբիւրներից յայտնի է, որ ուշ ժամանակներում եւս այն շարունակում էր մնալ իբրեւ իշխանութեան տոհմական գլխաւոր տապանատունը: Իսկ որ այն բոլոր ժամանակներում էլ եղել է Արցախի Մեծ-Կողմանք կամ Մեծ-Կվենք գաւառի առաջնորդարանը, դա կասկածից դուրս է:

Խաղավանքը գտնուում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտակերտի շրջանում, Թարթառ գետի աջ ափին, Վաղուհաս գիւղից 5–6 քմ. դէպի արեւմուտք, մի անտառածածկ լեռնաբազուկի վրայ:

Աղբիւրներում անունը վկայուած է հետեւեալ ձեւերով՝ Խաղավանք, Խաղի վանք, Խաղայի վանք, Խաղարի վանք: Վանքի գլխաւոր տաճարի արեւմտեան պատի տակ այժմ էլ կոտրուած-ընկած է մի տափակ քար, որի վրայ ՈԿԴ (1215 թ.) փորագրուած արձանագրութիւնն ասում է. «Ես Հասան եւ մայրն իմ Շուշիկ շինեցաք զսուրբ Կարապետս (երեւի եկեղեցի կամ մատուռ՝ նոյն վանական համալիրում, Բ. Ու, Մ. Հ.) ի Խաղա տապատունս...»: Ց. Օրբելին վանական համալիրի դարպասի կամարի տակից արտագրել է ՁԺԴ (1265 թ.) քանդակուած մի արձանագրութիւն, որի մէջ՝ «Ես Աւհանս միաբանեցա սուրբ ուխտիս Խաղի, տվի զԾառատականց այգետեղն...»[1]: Կիրակոս Գանձակեցին, Խաչենի Գրիգորիս եւ Եղիա եղբայր վարդապետների մասին խօսելիս, յիշում է, որ նրանք վախճանուել են եւ «կան ի պահեստի յաստուածափայլ տանն Խաղայի»[2]: Երկար ժամանակ Մարայ Դոփեան իշխանական տան տոհմական սեփականութիւնը եղած «Թարգմանչաց» յայտնի Աւետարանի 1312 թ. գրուած յիշատակարանում նշուած է, որ Դոփեան Գրիգոր իշխանի կին (Տարսայիճ Օրբելեանի դուստր) Ասփան «ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ զարդարեաց զանազան սպասիւք եւ շինուածովք զեկեղեցիս Հայաստանեաց. ստացաւ զսուրբ աւետարանս յարդար ընչից իւրոց եւ ընձայեաց ի սուրբ ուխտն իւր Խաղարի վանս»[3]:

Բոլոր այս անունները «Խաղավանք»-«Խաղի վանք»-ի տարբերակներն են: Իսկ «Խաղա»-«Խաղի»-ի ուղիղ ձեւն էլ «Խաղ»-ն է, անձնանուն, որ պատկանում է Սիւնիքում եւ Արցախում քարոզչութիւն կատարած հայ առաջին հոգեւորականներից մէկին՝ Խաղ Եպիսկոպոսին: Այս եպիսկոպոսի անուամբ է կոչուել, ուրեմն, Մարայ եպիսկոպոսանիստ-հոգեւոր կեդրոնը[4]:

---

1. ՍՍՀՄ ԳԱ Արուեստագիտութեան Ինստիտուտի լենինկրատեան բաժանմունքի արխիւ, Ց. Ա. Օրբելու Ֆոնտ, ձեռագիր տետրակ՝ *Խաչենի Վիմագրերը*:

2. Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, 1961, էջ 270:

3. Մաշտոցի անուան Մատենադարան, Ձեռ. թիւ 2743, էջ 113բ:

4. Յովհ. Եպս. Շահխաթունեանց, *Սաղմոսագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, Ա. հատ., Էջմիածին, 1842, էջ 163: Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, *Ազգապատում*, Ա. հատ., Ա. մաս, Պէյրութ, 1959, էջ 46: *Գիրք Թղթոց*, Թիֆլիս, 1901: Այստեղ Վանական Վարդապետն է տեղեկացնում որ Եղիշէն եւ Խաղը հայոց քրիստոնէութեան դարձի նախակարապետ Թադէոս առաքեալի 70 աշակերտներից են եղել. «Եւ Եղիշէ եւ Խաղայ Բ(2) յեւթանասնից են եւ գնացին ի կողմանս Աղուանից հրամանաւ Թադէոսի եւ անդ կատարեցան...»:

«Խաղավանք»-«Խաղարի վանքը», դարաբաղեան բարբառի արտասանական առանձնայատկութիւններին ենթարկուելով, հնչում է նաեւ իբրեւ «Խաթրավանք»-«Խրթրավանք»:

Խաղավանքը գոյութիւն է ունեցել վաղ միջնադարից եւ ունեցել է կաթողիկէ տաճար, երկրորդական եկեղեցիներ, մատուռներ եւ օժանդակ բազմաթիւ շինութիւններ: 12-րդ դարի առաջին կէսում այն ենթարկուել է անլուր աւերածութեան. 1139 թ. մեծ երկրաշարժից տուժել էր սաստիկ, երբ պակասն էլ 1143 թ. սելճուք թուրքերը լրացրին: Զոլի զօրապետի գլխաւորութեամբ նրանք եկան ապստամբած խաչենցիների վրայ եւ վրէժ հանեցին հոգեւոր կեդրոններից՝ հիմնայատակ աւերելով եւ սրբութիւններն էլ գերեվարելով[5]:

Վանքի վերստին շէնացումը կապուած է 12-րդ դարի վերջի եւ 13-րդ դարի սկզբի Հիւսիս-արեւելեան Հայաստանի հոգեւոր մշակոյթի զարգացման մեծ երախտաւորներից մէկի՝ Յովհաննէս վարդապետ Խաչենցու անուան հետ:

Վերին Խաչենի իշխանական տան պայազատներից էր Յովհաննէս վարդապետը: Վաղ հասակից կուսակրօնութեան տրուած լինելով՝ նա բազմակողմանի կրթութիւն ստացաւ, ապա նախ հոգեւոր ծառայութիւն կատարեց հայրենի նահանգում, եղաւ Սարգիս Զաքարեան ամիրսպասալարի երկու զաւակների՝ Զաքարէի եւ Իւանէի դաստիարակը[6]. իսկ դարի 70-80-ական թուականներին առաջնորդութիւն արեց Սանահինի վանքում, 90-ականներին՝ Հաղբատում:

Սանահինում նա կառուցել է Ամենափրկիչ եկեղեցին ու նրա գաւիթը (1181 թ.), վերակառուցել է կաթողիկէ տաճարը (1184 թ.): Հաղբատավանքի առաջնորդութիւնը պէտք է վարէր նաեւ 1206 թ.ից մինչեւ 20-ականների կէսը՝ այստեղ էլ կառուցելով հռչակաւոր մեծ գաւիթը, վերակառուցելով Ս. Գրիգոր եկեղեցին, զարկ տալով գրչութեան գործին ու մանրանկարչական արուեստի զարգացմանը[7]:

Սակայն Հաղբատի առաջնորդութեան ընդմիջումին (մօտաւորապէս 1195-1205 թթ.) Յովհաննէս վարդապետը նորից եղաւ Խաչենում, վերականգնեց Խաղավանքը եւ 1204 թ.ին աւարտեց նրա գլխաւոր տաճարի կառուցումը, որի մասին պատմում է տաճարի արեւմտեան պատին, գլխաւոր դրան ճախակողմը դրուած հետեւեալ շինարարական

---

5. Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք Ի Գրոց Պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 132: Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 386:

6. Կիրակոս Գանձակեցի, էջ 171:

7. Յովհաննէս Խաչենացու գործունէութեան հանգամանքները տես՝ Բ. Ուլուբաբեան, *Մարեցի Իշխանազունները Հաղբատ եւ Սանահին Վանքերի Առաջնորդներ*, «Էջմիածին», 1974, ԺԱ, էջ 43-50:

արձանագրութիւնը. «Ի ՌԾԳ (1204) թուիս ես տէր Յովհաննէս չինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք, որ ի սմա եւ արկի զՋոթացն այգին եւ զմատաղիսն բազում աշխատութեամբ եւ ետու զվանքն իւր ամէն սահմանաւն իմ աղբաւրս Հասանա եւ իւր որդեացն՝ Հաթերքո տեառն միջնորդութեամբ։ Ով խափանէ, խափանեցի ի կենացն Աստուծոյ»[8]։

Այս արձանագրութիւնն ունի նաեւ երկրորդ մաս, որ Յովհաննէս եպիսկոպոսի եղբայր Հասանն է գրել. «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանա, որ երբ իմ աղբերս չինեաց ու զվանքս ինձ երետ, ես զԹնձորոբակս իւր սահմանաւն ի յեկեղեցիս տուի։ Ով հակառ[ա]կ [կ]ա, Աստուծոյ է հակառակ, եւ զայս գիրս խափանէ, չունի թողութիւն յԱստուծոյ»։

«Հաթերքի տէրը» քառասուն տարի իշխանութիւնը վարելուց յետոյ Դաղի վանքում կրօնաւորութիւն արած Հասան իշխանի որդի Վախտանգն էր, Խաչենի գահերէց տիրակալը, Մխիթար Գոշի եւ առհասարակ ժամանակի հայ մշակոյթի նշանաւոր հովանաւորը[9]։ Իսկ Յովհաննէսի եղբայր Հասանը Մարայ կամ Վերին Խաչենի իշխանն էր, Սարգիս Զաքարեան ամիրսպասալարի դուստր Դոփի ամուսինը։ Այս արձանագրութիւնից յետոյ աղբիւրները լռում են Հասանի մասին, որ նշան է, թէ վախճանուել է։

Հետագայում, մինչեւ քսանական թուականները, իշխանութիւնը վարում էր Դոփը, որից եւ իշխանական տունը հետագայում կոչուել է Դոփեան։

Ուրեմն, Յովհաննէսը կառուցել է վանքի կաթողիկէն՝ «բազում աշխատութեամբ» այնտեղ հաւաքելով խաչեր, գրքեր, վանքին նուիրել այգի ու մատաղիս (մատաղ այգի) եւ այս բոլորը Հաթերքի տէր Վախտանգի միջնորդութեամբ յանձնել եղբայր Հասանին ու նրա որդիներին։ Նշանակում է՝ Խաչենի տարածքում ստորադաս իշխանութիւնների այսօրինակ գործարքներն անգամ կատարւում էին գահերէցի միջամտութեամբ։

Յովհաննէսի այս արձանագրութիւնը մեր վանքերին կից ստեղծուած մատենադարանների մասին անգրանիկ վիմական յիշատակագրութիւններից է։ Յովհաննէսի հիմնադրած մատենադարանը հետագայում հարստացել է ինչպէս տեղի գրչական կեդրոնի արտադրանքով, այնպէս

---

8. Այս արձանագրութիւնը՝ մէկ ամբողջական քարի վրայ, այժմ գտնւում է Մաշտոցի անուան Մատենադարանի ցուցասրահում։

9. Վախտանգի տոհմանաբանութիւնը եւ իշխանութեան հանգամանքները տես՝ Բ. Ուլուբաբեան, *Խաչենի Իշխանութիւնը ԺԵ-ԺԱ. Դարերում*, Երեւան, 1975, էջ 144–153, նաեւ՝ գրքին կցուած տոհմածառը։ Մխիթար Գոշ, *Գիրք Դատաստանի*, աշխատասիրութեամբ Խոսրով Թորոսեանի, Երեւան, 1975, «Առաջաբան», նաեւ էջ 546–549։

էլ ներմուծուած բազմաթիւ ձեռագրերով, մանաւանդ, որ այդ մասին հոգում էին իրենք՝ Ծարայ տէրերը: Այս ներմուծումները կատարւում էին տարբեր ճանապարհներով, որոնցից նշելի է յատկապէս կողոպուտի ենթարկուած ձեռագրերի ետգնումը, կամ՝ ինչպէս ընդունուած է ասել, գերեվարութիւնից փրկել-տունդարձնելը: Այս տեսակէտից հետաքրքիր է ճակատագիրն այն ձեռագրի, որ յայտնի է «Գետաչէն»ի անուամբ: Դա մի փառահեղ Աւետարան է, Հաղբատի ձեռագրական ու մանրանկարչական դպրոցի ամենաբարձրարուեստ գործերից մէկը, որ ստեղծուել է 1211 թ. «յառաջնորդութեան տեառն Յովհաննիսի սրբասիրի», այսինքն՝ Խաղավանքը կառուցողի: Այն տարագրուել է ստեղծման վայրից եւ ո՛վ գիտի՝ ինչպէս կը դասաւորուէր հետագայ բախտը, եթէ հենց Խաղավանքում կրթութիւն ստացած Սարգիս անունով մի քահանայ 1223 թ. մեծ փրկագնով չառնէր այն ու չբերէր Խաղավանք («իւր տեղի սննդեան»): Այդ մասին պատմում է Սարգիսի յիշատակարանը՝ գրուած նոյն Աւետարանում. «Արդ երանելիս Սարգիս իբրեւ զիմաստուն վաճառական ի խնդիր պատուական մարգարտին եւ գտեալ զսա ի գաւառին Անոյ մեծայծախ, ոսկեգիր եւ ոսկեճաճանչ ծաղկաւք զարդարեալ ըստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց... եւ ընծայեաց զսա Մեծ-Կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան»[10]:

Պահպանուել է Հասանի ու Դոփի որդու՝ Գրիգոր իշխանի, մի յիշատակարանը, որ պատմում է Գրիգորի մասնակցութիւնը թաթար-մոնկոլների արշաւանքներին, թուարկում Կարնոյ երկրում, Կապադովկիայում եւ այլուր սելճուք-թուրքերից փրկուած այն ձեռագիր մատեանները, որոնք յետոյ պէտք է հանգրուանէին Խաղավանքում: Գրիգորն իր փրկած հայրենի յիշատակներն է թուարկում, ապա՝ «զտառս աստուածային... բերաք ի տէրութիւնս մեր. զծաղկալից բուրաստան զԱւագ տօնական եւ միւս այլ տօնական... Յովհանն եւ զԱւետարանն... զոր ի քաղաքէն Կարնոյ բերաք... եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս: Ի միւսում ամի այլ գնալով ընդ նոսա (մոնկոլների հետ) եւ ի մայրաքաղաքն Կապադկացոց նահանգին եւ անդի առեալ զԱւետարանն պարոնն իմ Ավագն եւ ետ ինձ... եւ բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս»[11]:

---

10. Մատենադարանի Ձեռ. թիւ 6288, էջ 348բ-350ա: Ձեռագրիս նկարագրութիւնը տես՝ Մ. Բարխուդարեանց, *Արցախ*, Բագու, 1895, էջ 262-263: Հանգամանալից քննութիւնը՝ Գարեգին Յովսէփեան, *Հաղբատի Դպրոցի Մի Գլուխ Գործոց (Գետաչէնի Աւետարանը)*, «Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ», Ա. պրակ, Երուսաղէմ, 1935, էջ 41-75:

11. Մատենադարանի Ձեռ. թիւ 7347, էջ 343բ: 1166 թ. Հռոմկլայում ընդօրինակուած այս ձեռագիրը հետագայում ընկել է Լենինականի մօտ գտնուող Օրթաֆիլիսա (այժմ՝ Մայիսեան) գիւղի եկեղեցին: Հիմա պահւում է Մաշտոցի անուան Մատենադարանում:

Մարայ տէրերի հոգատար ուշադրութիւնն իրենց հոգեւոր կեդրոնի նկատմամբ միշտ էլ բորբոք է մնացել: Ձեռագրական տեղեկութիւններով կարելի է հաստատել, որ վանքում, մի կարճ դադարից բացի, մնացած ամբողջ ժամանակն անխափան գործել են նրա ուսումնարանն ու ձեռագրատունը:

Վանական համալիրի ճարտարապետական կերպարն անխաթար ու առաւել բարւոք պահելը եւս ծարեցի աշխարհիկ ու հոգեւորական իշխանազունների մշտական մտագոհութիւնն է եղել: 1215 թ. Հասանն ու իր մայր Շուշիկը կառուցել են Սուրբ Կարապետ եկեղեցին, որի մասին հաղորդում է իրենց իսկ արձանագրութիւնը: 1225թ. Յովհաննէսաշէն տաճարի գաւիթն է կառուցել ինքը՝ իշխանութեան տնօրէն Դոփը, տաճարի հիւսիսային պատի արեւելեան անկիւնում մի քարի վրայ արձանագրելով այդ կառուցման փաստը՝ նուիրատուութիւնների հետ միասին:

Վանքը մեծ նորոգումների ու կառուցում-լրացումների է ենթարկուել Հասան Բ.ի որդի Գրիգոր Բ.ի եւ նրա կին Ասփայի կողմից 13-րդ դարի վերջում եւ 14-րդի սկզբում[12]:

Հետագայում եւս նորոգումներ կատարուել են: Սակայն ագգոյունլու եւ գարա-գոյունլու թուրքերի դժնդակ տիրապետութեան տարիներին համարեա լրիւ կանգ էր առել կեանքն ինչպէս Խաթրավանքում, այնպէս էլ հարեւան հոգեւոր կեդրոններում: «Ի վանորայքս մարդ չկար, որ առաջն գար եւ չէն պահէր եւ զեկեղեցիքս լուսաւորէր», — դառնութեամբ արձանագրել են Մարայ տէրերը 15-րդ դ. սկզբին[13]: Սակայն սրանից անմիջապէս յետոյ էլ վերականգնւում է հոգեւոր կեանքի ընթացքը, չնայած բռնակալական լուծը դեռ չէր թօթափուել, եւ ժողովուրդը տնքում էր ծանր հարկերի տակ: Հետագայ ժամանակից (1694 թ.) մնացած մի ձեռագիր-յիշատակարանում Խաղավանքի հոգեւորականը նշում է, թէ «նորոգեցաք զսուրբ աթոռս Խաղէի աստուածափառ սուրբ ուխտս՝ ի դառն ամանակի, յորում նեղինք ի բռնաւորաց»[14]:

Հայկական համարեա բոլոր վանքերն ու եկեղեցիները կառուցուած են առաւել հին սրբավայրերում, հնագոյնները՝ հեթանոսական մեհեանների ու տաճարների փլատակների վրայ: Միջնադարեան Խաչենում, այս աւանդոյթի կողքին, սովորական է եղել նաեւ մի այլ

---

12. Տես՝ Մաշտոցի անուան Մատենադարանի Ձեռ. թիւ 2743-ի յիշատակարանները:

13. Ա. Լ. Եակոբսոն, *Հայ Միջնադարեան Ճարտարապետութեան Պատմութիւնից* (ԺԳ. դ. Գանձասարի Վանքը), «Արեւելքի ժողովուրդների Մշակոյթի Պատմութեան Ուսումնասիրութիւններ», ժողովածու՝ նուիրուած Յ. Ա. Օրբելուն, Մոսկուա-Լենինկրատ, 1960, էջ 146, 152(ռուսերէն):

14. Նոյնը:

կարգ· կառուցուած նոր շինութեան մէջ պահպանել են նաեւ հնի յիշատակները, մանաւանդ, եթէ այդ հինը կործանուած է եղել անբնական եղանակով: Փլատակուած յուշարձանների յիշատակներին մեծ տեղ է տրուել առանձնապէս այն շէնքերում, որոնք կառուցուել են 12-րդ դ· երկրորդ կէսում եւ 13-րդի սկզբին: Դա սելճուք թուրքերի կատարած աւերածութիւնների պատասխանն էր, մի երեւոյթ, որ իր փայլուն դրսեւորումն է գտել Դադի վանքում, Խաղավանքում եւ միւս վանական համալիրներում: Դադի վանքում Հասան Կրօնաւորեալը 1180-ական թուականներին կառուցել է մի փոքրիկ եկեղեցի, որի պատերի մէջ, ներսից ու դրսից, ագուցուած են առաւել հին քարեր՝ վիմագրերի պատառիկներով, զարդաքանդակներով, հին ու նոր խաչքարեր՝ համապատասխան գիր ու թուականներով, հաւասարաթեւ խաչերով քարեր, որոնց տիպը թուագրւում է 4-6-րդ դարերով: Այս յիշատակների մէջ տեղ է գտել նոյնիսկ մի ջրաղացքար, որ «զարդարում է» դռնագլուխը: Այս նշանակում է՝ սելճուքները ջրաղացն էլ են աւերել, եւ շինարարները փրկել-պահել են «նահատակուած» ջրաղացի մասունքը: Եւ, այսպիսով, Հասանի եկեղեցին իր եւ աւելի վաղ ժամանակների համար դարձել է իւրայատուկ թանգարան-ցուցահանդէս:

Տասներկուերորդ դարի առաջին կէսում աւերուած Խաղավանքի համար էլ նոյն նշանակութիւնն ունի Յովհաննէս վարդապետի կառուցած տաճարը, որի պատերի մէջ, դրսից ու ներսից, տեղաւորուած են հին խաչքարեր ու արձանագրութիւնների պատառիկներ կրող քարեր: Յովհաննէս վարդապետի շինարարական արձանագրութեան «ժողովեցի զխաչս» հենց այդ խաչքարերն ու խաչաքանդակներով քարերը պատերի մէջ տեղադրելն է նշանակում: Հին քարերի վրայի վիմագրական պատառիկներն այժմ, դժբախտաբար, եղծուած են, սակայն մնացել են սակաւաթիւներ, որոնցից ուշագրաւ է տաճարի ներսում, հիւսիսային պատի մէջ ագուցուած մի քար: Նրա վրայ կայ տասներեք տողանոց հետեւեալ արձանագրութիւնը· «Ես Սեւադա՝ դուստր Դեսումա, շինեցի զեկեղեցիս եւ ետու զԿորդահողդ սուրբ նշանն մեծ ծախիւք ի սմա վասն իմ հոգոյս: Արդ առաջնորդ ով լինի ի սմա, զառաքելոցն տաւնին ետն: Դ: աւր ժամ իմ հոգոյս արասցէ յամէն ամի: Որ խափանէ, իմ մեղացս պարտական է: Թ: ՈԼԱ:» (1182 թ·):

Այս արձանագրութիւնից կարելի է եզրակացնել, որ Յովհաննէսի տաճարը կառուցելիս քանդել են նաեւ Դեսումի դուստր Սեւադայի կառուցած մի աննշան եկեղեցին, եւ նրա շինարարական արձանագրութիւնն էլ դրուել է նորակառոյց տաճարի ակնառու տեղում, որպէսզի ե՛ւ յիշատակը պահպանուի, ե՛ւ Սեւադայի մատուցուելիք պատարագները չմոռացուեն:

Տաճարի արեւելեան պատում, դրսից, բեմի առաջացրած կորութեան մէջ ագուցուել է մի գեղեցիկ (արդէն կիսամաշ) խաչքար՝ հինգ տողանոց հետեւեալ արձանագրութեամբ. «Թվ: ՈԽԸ:(1199 Թ.) ես Վարդան Լանգնեցի զխաչս հոգոյ իմոյ: Ցիշեցէք ի Քրիստոս»:

Յովհաննէսաշէն տաճարի միւս հետաքրքիր արժանիքն էլ կտուրն իրենց վրայ պահող չորս սիւների յարդարանքն է: Սիւների մոյթերին, հայեացքով դէպի արեւմտեան մուտքը, կենդանիների գլուխներ են քանդակուած՝ մէկական քանդակ իւրաքանչիւր սիւնի մոյթի ճակատին: Մի 20–25 տարի առաջ պարզ երեւում էր, որ առաջին երկուսը եզների գլուխներ են, ետեւինները՝ խոյի եւ առիւծի: Այժմ քայքայուած են ելուստները, եւ դժուար է նրանք իրարից տարբերել: Սակայն կարեւորն այն է, որ քանդակները դեռ կան եւ մեզ օգնում են պարզելու իրենց հետ սերտ առընչութիւն ունեցող մի կարեւոր հարց:

Մենք չենք կարծում թէ Խաղավանքի այս քանդակներն արուեստի բարձր արտայայտութիւն են, կամ՝ իրենց տեսակի մէջ մի արտաքոյ կարգի երեւոյթ: Ընդհակառակը, նրանք հայկական միջնադարեան ճարտարապետութեան մէջ լայնօրէն տարածուած երեւոյթի դրսեւորում են հանդիսանում՝ արտասովոր միայն նրանով, որ դրուել են սիւների մոյթերին, շատ ցածր, եւ աղօտ լուսաւորուած տաճարի ներսը դիտողին այնպէս է թւում, թէ այդ գլուխների ետեւում մարմիններ էլ կան, որոնք եթէ փորձեն շարժուել, իրենց հետ կարող են տանել տաճարը, կամ թերեւս՝ իրենց ետեւից կը քաշեն բեմը:

Ուրիշ տաճարներում այս տեսակ քանդակները սովորաբար տեղադրուած են լինում բարձր տեղերում, յատկապէս գմբէթատակի տարածութեան մէջ: Ա. Լ. Եակոբսոնը եւ Ստ. Մնացականեանը արդէն առիթ ունեցել են անդրադառնալու համանման երեւոյթի հարցին: Խօսելով Գանձասարի տաճարի քանդակագործական յօրինուածքում տեղ գտած եզան գլուխների ու արծիւների մասին, նրանք գտնում են որ դրանք միջնադարեան մեր ճարտարապետական կառոյցներում լայն տարածում ունեցող պահպանիչ խորհրդանշանների կերպարներ են[15]: Ստ. Մնացականեանը միաժամանակ դիտել է Գանձասարի ու Սանահինի վանքերի մի քանի քանդակների նշանակալից նմանութիւնը՝ փորձելով այն բացատրել ինչ-որ աւանդոյթով: Ահա թէ նա ի՛նչ է գրում այդ առթիւ. «Այստեղ (Սանահինի Աստուածածին եկեղեցում.— Բ. Ու., Մ. Հ.) եկեղեցու ներսում, գմբէթատակ չորս տրոմպներից ցած տեղեւորուած են մարդու, խոյի եւ երկու եզների գլուխներ ներկայացնող բաւականին ուժեղ ելուստ ունեցող, համարեա թէ կլոր

15. Ա. Լ. Եակոբսոն, նշ. աշխ., էջ 142, 152:

քանդակներ։ Ուշագրաւ է, որ քանդակների ճիշդ նոյն խումբը (մարդ, խոյ եւ երկու եզներ), այս անգամ արդէն գմբէթատակ առագաստների վրայ, հանդէս է գալիս նաեւ... Գանձասարի տաճարում։ Այստեղ հիւսիս-արեւմտեան առագաստի վրայ պատկերուած է մարդու դիմաքանդակ, հարաւ-արեւմտեան առագաստի վրայ՝ խոյի գլուխ, իսկ հարաւ-արեւելեան եւ հիւսիս-արեւելեան առագաստների վրայ՝ եզների գլուխներ։ Հետաքրքիր է, որ քանդակներն ունեն ճիշդ եւ ճիշդ նոյն դասաւորութիւնը, ինչ Սանահինի Աստուածածին եկեղեցում, հանգամանք, որ հազիւ թէ պատահական լինէր եւ անշուշտ կապուած է ինչ-որ դեռեւս մեզ լրիւ ոչ հասկանալի աւանդոյթի հետ»[16]։

Իրաւացի է գիտնականը. նշուած քանդակների չորս թիւը եւ, մանաւանդ, բնորդները (մարդ, խոյ, արծիւ եւ այլն) կապուած են հին այնպիսի հաւատալիքների ու աւանդոյթների հետ, որոնք յայտնի են բնագիտութեան ու փիլիսոփայութեան պատմութեանը եւ դիտւում են որպէս աշխարհի նիւթականութեան վերաբերեալ հին աշխարհի փիլիսոփաների կոնկրետ պատկերացումներ։ Դեռեւս յոյն փիլիսոփայ Զենոնը (Ք. Ա. 490-430 թթ.) ապա աւելի հանգամանօրէն Արիստոտելը (Ք. Ա. 384-322 թթ.) գտնում էին, որ բնութեան զարգացումը կատարւում է չորս տարրերի՝ հողի, ջրի, հրի եւ օդի փոխներգործութեամբ[17]։ Այս պատկերացումն է ընկած նաեւ վաղ միջնադարեան հայ փիլիսոփաների (Եզնիկ Կողբացի, Անանիա Շիրակացի եւ այլք) աշխարհըմբռնման հիմքում։ Շիրակացին, օրինակ, օտար եւ հայրենի նախորդների օրինակով կարծում էր, որ աշխարհի հիմքը չորս տարրերն են կազմում։ Նա գրել է. «Առաջինն՝ հուր, երկրորդն՝հողմ, երրորդն՝ հող, չորրորդն՝ ջուր... Այլ երկինք եւ երկիր եւ որ միջոցիս են հաստատութիւնք ամենայն, որ ի նոսա, յայս նիւթոց կազմեցան...»[18]։

Չորս տարրերի մասին եղած այս պատկերացումը մտել է մարդկային մշակոյթի շատ բնագաւառներ, հիմք դարձել արուեստի շատ ու շատ սկզբունքների համար։ Այն իր հիմնաւոր տեղն ունի նաեւ հայ մշակոյթի մէջ՝ սկսած հնագոյն ժամանակներից։ Հայաստանի տարածքում, սկսած հենց Վանի թագաւորութեան ժամանակներից, չորս տարրերի հետ կապուած պատկերացումը հետաքրքիր շատ դրսեւորումներ է ունեցել[19]։ Այդ դրսեւորումներից, յիրաւի, ամենակարե-

---

16. Ստ. Մնացականեան, *Պահպանիչ Խորհրդանշանները Միջնադարեան Հայ Քանդակագործութեան մէջ*, «Պատմա-Բանասիրական Հանդէս», 1970, թիւ 3, էջ 191-192։

17, Արիստոտել, Գիրք Ա., գլուխ Դ., §8։

18. Անանիա Շիրակացի, *Տիեզերագիտութիւն եւ Տոմար*, Երեւան, 1940, էջ 3-4։

19. Աստուր Մնացականեան, *Հայկական Զարդարուեստ*, Երեւան, 1955, էջ 141-208, յատկապէս՝ էջ 185-204։ Նոյնի՝ *Անի Բանաստեղծ Վարդան Անեցին եւ Նրա Ներբողը*, «Բանբեր Մատենադարանի», թիւ 10, Երեւան 1971, էջ 266-275։

ւորը քառաթեւ խաչն է: Նոյն պատկերացման շատ ցայտուն դրսեւորումն է նաեւ երկնային կառքը՝ չորս լծկաններով, որոնք սովորաբար լինում են՝ մարդ, առիւծ, եզ եւ արծիւ: Հասկնալի է, որ հին մարդիկ այս ընտրութեան մէջ եւս կոնկրետ իմաստ ու բովանդակութիւն են դրել: «Ինչպիսի առաւել վեհ կերպարներ կարող էին փոխառնել բնութիւնից մարդիկ, որոնք փորձում էին գտնել բարձրագոյն էակի իմաստութեան, ուժի եւ ամենագոյութեան մասին իրենց պատկերացումների մարմնաւորումը: Ի՞նչը կարող էր աւելի լաւ անձնաւորել խելքն ու գիտելիքները, քան մարդու գլուխը, ոյժը՝ քան առիւծի մարմինը, ամենագոյութիւնը՝ քան թռչունի թեւերը»[20]: Աւելացնենք. եւ ի՞նչը կարող էր աւելի լաւ մարմնաւորել աշխատանքը, կենսական բարիքի ստեղծման գործին բերած անխոնջ մասնակցութիւնը, քան եզը: Իսկ եթէ եզան փոխարէն երբեմն էլ հանդէս է գալիս ցուլի պատկերը, ապա չի կարելի մոռանալ, որ «Ցուլի հեթանոսական պաշտամունքը ոչ միայն ուժի եւ աշխատանքի, այլեւ սիրոյ եւ բեղմնաւորութեան (հետեւաբար՝ դարձեալ կեանքի յարագոյութեան ապահովման) երեւոյթների պաշտամունքն էր»[21]:

Քրիստոնէական եկեղեցին այս չորս տարերքի ուժերով ընթացող երկնային կառքի վրայ բազմած ներկայացնում էր Քրիստոսին: Քրիստոսն է հզօր կառավարը, որ սանձել է տարերքը եւ իշխում է յաւերժութեան վրայ: «Այլ նա աւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք, ի ջերմութենէ, ի ցրտութենէ, ի ցամաքութենէ եւ ի խոնաւութենէ. եւ զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զչորս կարգեցողն ընդ միմեանս ի հաշտութեան եւ ի հաւանութեան պահեալ նուաճէր...»[22]:

Կառքի փոխարէն էլ շատ յաճախ հանդէս է գալիս երկնային գահոյքը, կամ՝ աթոռը, վրան բազմած աստուածութեամբ հանդերձ: Իսկ աթոռին լծուած են դարձեալ նոյն կենդանակերպները, որոնց մէջ, ըստ աւանդութեան, ընդունուել են չորս աւետարանիչները:

Զարդարուեստի բազմաթիւ ստեղծագործութիւններում երկնային կառքը երբեմն էլ ներկայացւում է միայն նրա, այսպէս կոչուած, լծկանների միջոցով, եւ դերաբաշխման մէջ փոփոխութիւններ են կատարւում, յիշեալ հնաւանդ պատկերի ամբողջութիւնը խախտւում է, եւ նրա փոխարէն հանդէս են գալիս, մարդ, երկու եզ, մէկ արծիւ, կամ՝ երկու եզ, երկու արծիւ, նաեւ՝ երկու արծիւ, երկու առիւծ,

---

20. Կ. Կերամ, *Աստուածներ, Դամբարաններ, Գիտնականներ*, Երեւան, 1966, էջ 290: Հմմտ. Աս. Մնացականեան, *Անիի Բանաստեղծ...*, էջ 269–270:

21. Աս. Մնացականեան, *Անիի Բանաստեղծ...*, էջ 273:

22. Եզնիկ Կողբացի, *Եղծ Աղանդոց*, Թիֆլիս, 1914, էջ 13:

կամ՝ մէկ եզ, մէկ առիւծ, երկու արծիւ: Պարսկական մի հին յուշարձանում («Խոսրով Փարուեզի ժամացոյցը») երկնային կառքին լծուած են միայն չորս եզներ, որոնք տանում են Լուսնի աստուածութեանը[23]: Կիլիկեան յայտնի Աւետարանի արծաթէ կազմի վրայ երկնային կառքին լծուած են մարդ, խոյ, արծիւ եւ առիւծ, բոլորն էլ թեւաւոր[24]: Իսկ Սեւանի Ս. Առաքելոց վանքի դրան վրայ քանդակուած երկնային կառքի լծկաններն են՝ արծիւ, մարդ, առիւծ եւ եզ[25]: Վերջինս երկնային կառքի ցայտուն պատկերն է եւ ցոյց է տալիս, թէ ինչպէս լծկանները կառքում բազմած Քրիստոսին տանում են յաւերժութեան ճամբաներով:

Նման օրինակներ կարելի է շատ բերել: Նրանք առկայ են ինչպէս ճարտարուեստի յուշարձաններում, այնպէս էլ (եւ առաւել եւս) մանրանկարչութեան մէջ, զարդարուեստի միւս բնագաւառներում: Դժուար է ասել, թէ այս բնագաւառներից որի՞ն է պատկանում առաջնութեան պատիւը: Կարեւորն այն է, որ ժողովրդի գեղարուեստական մտածողութեան մէջ չորս կենդանակերպարներն ունեն իրենց կոնկրետ նշանակութիւնը, եւ այն անպայման զուգորդւում է բնութեան չորս տարերքի եւ նրա հիմքի վրայ ստեղծուած միւս պատկերային երեւոյթին՝ երկնային կառքի կամ գահի հետ:

Անհրաժեշտ է վերստին յիշել, որ երկնային կառքի տեսարանում (նրա չորս կենդանապատկերներում), ինչպէս վերը տեսանք, կարեւորը ոչ թէ կենդանիների հաստատուն դերաբաշխումն է, այլ քառեակը: Հաւանական է, յուշարձանի ստեղծողից, կոնկրետ միջավայրից ու պայմաններից էր կախուած լինում, թէ չորս թիւն ինչո՞վ պէտք է լրացուէր: Եւ պատահական չէ, որ Սանահինի ու Գանձասարի շինարարները նախապատուութիւն են տուել «մարդ-խոյ-երկու եզ» համադրութեանը: Նրանք այդ լծկաններով են պատկերացրել երկնային կառքը տաճարի գմբէթի ներսում («եւ զօրութիւն իմն ծածուկ կառավար»)՝ անկասկած իբրեւ իրենց երկրագործական ու անասնապահական կեանքի պարզ դրսեւորում:

Գանձասարի ճարտարապետը գմբէթի թմբուկի դրսի մասում, արեւելեան ու հիւսիսային նիստերի վրայ լծկանների շարքում նորից փոփոխութիւն է մտցրել, դարձրել է երկու եզ, երկու արծիւ, վերջիններս՝ ոճաւորուած:

---

23. Տես՝ Ա. Մնացականեան, *Հայկական Զարդարուեստ*, էջ 196–197:

24. Ն. Ստեփանեան, Ա. Զաքմաքչեան, *Միջնադարեան Հայաստանի Դեկորատիւ Արուեստը*, Լենինկրատ, 1971, նկ. 156 (ռուսերէն):

25. Նոյնը, լուսանկար 166: Կազմողներն այս նկարը կոչել են «Քրիստոս՝ Ամենափրկիչ», որ անբաւարար է:



ՆԿ. 1. ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ԳԼԽԱՒՈՐ ԵԱՏԱԿԱԳԻՍԸ
(Չափագրութիւն՝ Կ. Ղահրամանեանի)



ՆԿ. 2. ԹԱԹՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴԵՐԿԱՑՆԱԿԱՆ ԿՏՐՈՒԱԾՔԸ
(Զափագրություն՝ Կ. Ղահրամանեանի)

ՆԿ. 3. ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ՏԵՍՔԸ ՀԱՐԱՎԻ ԱՐԵՒՄՈՒՏՔԻՑ

ՆԿ. 4. ԹԱԹՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՄԻՋԵՒ ԴՐՈՒԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԸ



ՆԿ. 5. ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍԻ ՏԵՍՔԸ ԴԷՊԻ ԱՐԵՒՄՈՒՏՔ

ՆԿ. 6. ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍԻ ՏԵՍՔԸ ԴԷՊԻ ՀԻՍՍԻՍ



ՆԿ. 7. ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄՈՑԹԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍԸ



ՆԿ. 8. ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԻՒՆԻ ԽԱՐԻՍԽԸ

ՆԿ. 9. ԽԱԹՐԱՎԱՆՔ, ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏԸ



ՆԿ. 10. ԽԱԹՐԱՎԱՆՔ, ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆԵՐՍԻ ՏԵՍՔԸ

Արցախ-Խաչենի միջնադարեան շինարար ճարտարապետներն ու քանդակագործները գիտէին վերը քննութեան առնուած յարդարանքի իմաստն ու դերը: Նրա ապացոյցն են վանական կառոյցներում եւ առանձնապէս Խաղավանքում եղած այդ տիպի քանդակների տեղը, դասաւորութիւնը, թողած տպաւորութիւնը:

Նոյնը կարելի է ասել նաեւ այս վայրերում ընդօրինակուած ձեռագրերի մանրանկարչութեան մասին: Մեզ հասած բազմաթիւ ձեռագրերի նկարազարդումներում տեղ են գտել երկնային կառքի կամ գահի, նրա լծկանների ամենատարբեր դրսեւորումներ, որոնց բացատրութիւնը շատ լաւ տալիս են հենց իրենք՝ հեղինակները, նոյնիսկ գրիչները: Ահա այդպիսի շատ օրինակներից մէկը. Ամարասի հովանու տակ, էրերի (այժմեան Հերհեր) Սբ. Գրիգորիս եկեղեցու եպիսկոպոս-գրիչ Ստեփաննոսն իր ընդօրինակած յիշատակարաններից մէկում ձեռագրի մասին ասում է. «Այ նմանի չորեքկերպեան կենդանեացն, որ յաթոռ կազմեալ ամենասուրբ երրորդութեանն եւ միածնութեանն. մարդն՝ Մատթէոս, առիւծն՝ Մարկոս, եզն՝ Ղուկաս, արծիւն՝ Յովհաննէս, որ արքա անուանեցաւ»[26]:

Խաղավանքի գլխաւոր տաճարի ներսի չորս սիւների մոյթերին քանդակուած եզան ու խոյի գլուխները եւս մեզ տանում են դէպի միջնադարեան ճարտարապետական կառոյցներում, ինչպէս նաեւ մանրանկարչութեան ու արուեստի այլ բնագաւառներում լայնօրէն տարածուած չորս կենդանակերպների գաղափարական ակունքները եւ բացայայտում նրանց սերտ աղերսը աշխարհի նիւթականութիւնը կազմող չորս տարրերի մասին հին փիլիսոփայական պատկերացումների հետ:

*

* *

Խաթրավանքը մինչեւ օրս չէր չափագրուել, ուսումնասիրուել եւ ներկայացուել գիտական գրականութեան մէջ: Դրա պատճառներից մէկն էլ վանքի դժուարամատչելի դիրքն էր: Խաթրավանքի համալիրի շէնքերը տարածքի սահմանափակ չափերի պատճառով միմեանց բաւական մօտ են տեղադրուած: Միաժամանակ տեղանքի զգալի թեքութեան պատճառով նրանք կառուցուած են տարբեր բարձրութեան հարթակների վրայ: Հրուանդանի գագաթին գտնւում են եկեղեցին, զանգակատունը, դարպասը, խուցերը, նրանցից ներքեւ բնակելի մեծ շէնք է: Ամենացածր հարթակի վրայ՝ աշխարհիկ մի այլ կառուցուածք

---

26. Մատենադարանի Ձեռ. թիւ 7542, էջ 303բ-304ա:

(գրատունը)։ Այս երկու շէնքերը, տեղանքի թելադրանքով, եկեղեցու նկատմամբ շեղ են դրուած, եւ ձգւում են հարաւ-արեւելքից դէպի հիւսիս-արեւմուտք։ Վանքի բոլոր շէնքերը կառուցուած են կոպիտ մշակուած բազալտէ քարերից, կրաշաղախով։ Միայն եկեղեցու անկիւնները, սիւները, կամարները, մուտքի շրջանակը շարուած են սրբատաշ բազալտից։ Խաթրավանքը գտնւում է անտառապատ լեռնաբազուկի վրայ, որի հետեւանքով այն լրիւ քօղարկուած է ծառերով։ Համալիրի հիմնական շէնքերը համեմատաբար լաւ են պահպանուել, միայն տեղ-տեղ թափուած են երեսպատման եւ եկեղեցու քիւի որոշ քարեր։ Քանդուած են բնակելի խուցերը, որոնց հիմնապատերն են սոսկ մնացել։

Համալիրի հարաւային մասում եկեղեցին է եւ նրան հիւսիսից կից զանգակատունը։ Խաթրավանքի եկեղեցին իր ճարտարապետութեամբ զգալի տարբերւում է միջնադարեան Հայաստանի միւս բոլոր եկեղեցիներից՝ այն ունի բարդ կազմութիւն եւ փաստօրէն բաղկացած է երեք եկեղեցիներից, որոնք, սակայն, մի օրկանական ամբողջութիւն են կազմում։ Այդ եկեղեցախմբի բաղկացուցիչ տարրերն են երկու միանման, թաղածածկ մատուռները եւ նրանց միջեւ կառուցուած քառասիւն գմբէթաւոր եկեղեցին, շինուած 1204 թ. Յովհաննէս վարդապետի կողմից։ Մատուռներից հիւսիսայինը նուիրուած է Սբ. Պրոկոպիոսին, հարաւայինը՝ Սբ. Մինասին[27]։

Յուշարձանախմբի շինարարական-ճարտարապետական հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ մատուռները նախորդել են եկեղեցու կառուցմանը եւ հաւանաբար շինուել են 12-րդ դ. վերջին տասնամեակում։ Նրանք ունեն պարզ կառուցուածք՝ արեւելքից-արեւմուտք ձգուող թաղածածկ, ոչ մեծ դահլիճներ են (2,2×3,5 եւ 2,4×2,5 չափերի), որոնք արեւելքից աւարտւում են ուղղանկիւն խորաններով։ Վերջիններս ունեն եկեղեցիների աղօթասրահների լայնութիւնը, սակայն տարբեր խորութիւն եւ դահլիճներից անջատւում են որմնասիւներով եւ նրանց միջեւ ձգուող կամարով։ Խաթրավանքի մատուռների այս առանձնայատկութիւնը՝ խորանի ուղղանկիւն ձեւը 12–13 դդ. բաւական տարածուած էր հայ ճարտարապետութեան Արցախի դպրոցում[28]։ Միանաւ, ուղղանկիւն խորանով եկեղեցիներ ու մատուռներ կան Դադիվանքում, Գտիչի վանքում, Հիւրեկավանքում,

---

27. Սարգիս վրդ. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան*, Ա. մաս, Տփղիս, 1842, էջ 205։

28. M.M Hasratian, *L'Architecture des Eglises Géorgiennes et Arméniennes avec un Sanctuaire Rectangulaire à l'Interieur. IIe Symposium International sur l'Art Géorgien, Tbilissi, 1977.*

Եղիշէ Առաքեալի վանքում, եւ այլն։ Ուղղանկիւն խորան ունի նաեւ Արցախում Պտկենբերգի վանքի քառամոյթ գմբէթաւոր եկեղեցին։

Խաթրավանքում եկեղեցին չինելիս պահպանել են այս մատուռները, նրանց ներառնելով նորակառոյց տաճարի յատակագծային եւ ծաւալա-տարածական յօրինուածքներում։ Այդ է պատճառը, որ վանքի եկեղեցին ունի բաւական արտասովոր ճարտարապետութիւն, որն արտայայտւում է ինչպէս նրա ասիմետրիկ յատակագծում, այնպէս էլ արտաքին կերպարում։ Այն քառասիւն գմբէթաւոր կառուցուածք է, ընդորում գմբէթը տեղադրուած է ոչ թէ դահլիճի մէջտեղում, ինչպէս ընդունուած էր Հայաստանի նոյնատիպ յուշարձաններում, այլ արեւմտեան կողմում։ Դա պէտք է բացատրել միանաւ մատուռների առկայութեամբ, ընդորում նրանք ներառուած են եկեղեցու մէջ ոչ թէ ամբողջովին, այլ ծաւալների կիսով չափ, այնպէս, որպիսի մուտքերը բացուեն դէպի եկեղեցու դահլիճը։ Վերջինս արեւելքից աւարտւում է բեմի կիսաշրջանային խորանով, որի միայն հիւսիսային կողմում կայ աւանդատուն։ Այն ուղղանկիւն է, թաղածածկ եւ վերեւում ունի թաքստոց, որի մուտքը աւանդատան հարաւային պատի խորշից է։

Սովորաբար քառամոյթ գմբէթաւոր եկեղեցիների ներքին տարածութիւնը սիւների միջեւ ձգուող կամարներով բաժանւում է ինը հատուածի։ Սակայն Խաթրավանքում հարաւ-արեւելեան հատուածը լրիւ զբաղեցնում է հարաւային մատուռը, իսկ հիւսիսային մատուռի ծաւալը գրաւում է հիւսիս-արեւելեան հատուածի կէսից աւելին, որի պատճառով այն վերածուել է նեղ միջանցքի, ուր բացւում է մատուռի միակ՝ հարաւային կողմում տեղադրուած դուռը։ Հետաքրքրական է այն հատուածների ծածկի ձեւը՝ այն հիմնականում քառորդ գլանի կտրուածք ունեցող թաղով է իրականացուած։ Բացառութիւն են կազմում կեդրոնական, կիսաշրջանաձեւ թաղով ծածկուած հարաւային եւ արեւելեան հատուածները։ Վերջինս ունի առագաստային փոխանցումով ուռուցիկ ծածկ, որը, սակայն արտաքուստ, չէնքի ծաւալում չի արտայայտւում։ Ինչ վերաբերւում է կեդրոնական հատուածին, ապա այստեղ գմբէթն է, որն իր լուծումով եզակի է միջնադարեան Հայաստանի եկեղեցիների համար եւ փոխառուած է հայկական ճարտարապետութեան ստեղծած գաւիթների ու ժամատների գմբէթների ձեւից։ Խաթրավանքի գմբէթը (4,4 մ. տրամագծով) թմբուկ չունի։ Գմբէթակիր կամարների միացման անկիւններում տեղադրուած առագաստների միջոցով գմբէթատակ քառակուսին վերածւում է ութանկիւնի, որի վրայ բարձրանում է ներսից ութակող, գագաթում բաւականին մեծ երդիկով գմբէթը։ Երդիկը աղօթասրահի լուսաւորութեան հիմնական աղբիւրն է, որովհետեւ բացակայում է լու-

սամուտներով թմբուկը, իսկ եկեղեցու արտաքին պատերում լուսամուտները սակաւաթիւ են եւ բաւական նեղ։

Հայկական եկեղեցական ճարտարապետութեան համար գմբէթի այս անսովոր ձեւի (առանց թմբուկի) Խաթրավանքում կիրառման գաղտնիքը բացատրւում է եկեղեցին կառուցող անձնաւորութեան կենսագրութեան մի կարեւոր փաստով. Յովհաննէս վարդապետը մինչեւ Խաթրավանք տեղափոխուելը եղել է Սանահինի վանքի առաջնորդը եւ այնտեղ կառուցել է Ամենափրկիչ եկեղեցին եւ նրա գաւիթը (1181 թ.)[29]։ Իսկ Սանահինի գաւիթը հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ նշանաւոր է նրանով, որ այնտեղ առաջին անգամ ձեւաւորւում են չորս յենակէտներով գաւիթների ծաւալատարածական լուծման նոր սկզբունքները։ Սանահինի, աւելի ուշ կառուցուած Գոշավանքի (1197 թ.) եւ Կեչառիսի գաւիթներում (12-րդ դ. վերջ 13-րդ դ. սկիզբ) հանդէս է գալիս ծածկի քառաճակտուն ձեւը եւ համարեա վերանում է գմբէթի թմբուկը[30]։ Ահա նոյն երեւոյթին հանդիպում ենք նաեւ Խաթրավանքում։ Յովհաննէսը Խաթրավանքի եկեղեցում կիրառեց ոչ միայն Սանահինի գաւթի գմբէթի ձեւը, այլեւ գաւիթներին բնորոշ գմբէթակիր սիւներ, այն դէպքում, երբ հայ ճարտարապետութեան չորս յենակէտներով բոլոր գմբէթաւոր եկեղեցիներն ունեն մոյթեր, ոչ թէ սիւներ։ Սակայն Խաթրավանքում սիւներն իրենց ձեւով տարբերւում են գաւիթների եւ ժամատների սիւներից, որոնք զանգուածեղ են, միակտուր քարից եւ կտրուածքում շրջանաձեւ են կամ բազմանիստ[31]։ Խաթրավանքի արեւմտեան կողմի սիւները կտրուածքում ուղղանկիւն են, երկու կողմից կիսաշրջան կցուած, հիւսիս-արեւելեան սիւնը քառակուսի է, չորս անկիւնները երեք քառորդ շրջաններով մշակուած։ Իսկ հարաւ-արեւելեան սիւնի փոխարէն ուղղանկիւն որմնամոյթ է, հպուած հարաւային մատուռի պատին։

Սիւները նստում են ոչ թէ խարիսխների, այլ բարձր պատուանդանների վրայ, ընդորում հիւսիս-արեւելեան սիւնի պատուանդանը միւսների համեմատ կրկնակի բարձր է եւ հաւասար սիւնի բարձրութեանը։ Սիւներն ունեն խոյակներ, բաղկացած սալիկից, կրկնաձեւ միջին մասից եւ կիսագլանիկից։ Հետաքրքիր է, որ Խաթրավանքի խոյակների ձեւն ունեն Դադիվանքի պալատական դահլիճի սիւների

---

29. Կ. Ղաֆադարեան, *Սանահնի Վանքը եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, 1957, էջ 27։

30. Ստ. Մնացականեան, *Հայկական Գաւիթների Ճարտարապետութիւնը*, Երեւան, 1952, էջ 43-53 (ռուսերէն)։

31. Նոյնը։

խոյակները, կառուցուած Խաթրավանքից ընդամէնը եօթ տարի յետոյ, եւ վերջինիս ճարտարապետական ձեւերի ակնյայտ ազդեցութեամբ[32]: Ուշագրաւ են պատուանդանների վրայի քանդակները: Հարաւ-արեւմտեան սիւնի պատուանդանի հիւսիսային երեսին առիւծի գլխի ոճաւորուած քանդակ է, հիւսիս-արեւելեան սիւնի պատուանդանի արեւմտեան երեսին խոյի որմնամոյթի դէպի գմբէթատակ տարածութիւնը նայող կողմին՝ եզան գլուխներ, իսկ որմնամոյթի պատուանդանի արեւմտեան երեսին՝ օղակաձեւ գալարուած զոյգ օձեր: Կենդանակերպ այս քանդակները պահպանիչ խորհրդանշաններ են եւ բաւական տարածուած են հայ ճարտարապետութեան մէջ[33]: Պատուանդանների անկիւնները, խորանի կամարակապ խորշերից եզրայինները ունեն ստալակտիտային քանդակներ: Ընդհանուր առմամբ Խաթրավանքի դեկորատիւ յարդարանքը շատ զուսպ է: Նշուած քանդակներից, սիւների խոյակներից բացի գեղարուեստական մշակում (ընդորում շատ համեստ) ունի եկեղեցու գլխաւոր՝ արեւմտեան մուտքը, որի դրան ուղղանկիւն բացուածքը ներառուած է կամարակապ վերջաւորութեամբ խորշի մէջ, որի կողերը մշակուած են կիսասիւնիկներով: Սակայն Խաթրավանքի արտաքին ճակատների յարդարանքի կարեւոր տարրեր պէտք է համարել այն բազմաթիւ խաչքարերը, որոնք տեղադրուել են շարուածքի մէջ եւ զգալի աշխուժացնում են պատերի մակերեսները:

Եկեղեցին ունի համարեա խորանարդաձեւ ծաւալ. չկան ճակատոններ, պատերն աւարտւում են միեւնոյն բարձրութեան վրայ եւ տանիքը լուծուած է եղել բրգաձեւ, ընդորում մատուռները ծածկուել են եկեղեցու տանիքի լանջերի շարունակութեամբ: Եկեղեցին ունեցել է կղմինտրէ ծածկ. ինչպէս տանիքին, այնպէս էլ շէնքի շուրջը թափուած կան բազմաթիւ կղմինտրներ, միայն մէկ տիպի (կիսագլանաձեւ) պատկանող: Խաթրավանքը հարուստ է արձանագրութիւններով՝ շինարարական, նուիրատուական եւ այլն: Արձանագրութիւններից պարզւում է միջնադարեան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի հետաքրքիր մանրամաս՝ շէնքի առանձին մասերը (սիւն, կամար, բեմի սեղան) շինուել են առանձին մեկենասների միջոցով[34]: Խաթրավանքը նորոգուել է 1691 թ. Յովհաննէս, Բարսեղ, Աթանաս եւ Ղազար վարդապետների ձեռքով[35]: Սակայն այդ վերա-

32. Տես՝ Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան, *Դաղիվանք*, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Ը. հտր., 1980, էջ 7-54:

33. Ստ. Մնացականեան, *Պահպանիչ Խորհրդանշանները Միջնադարեան Հայ Քանդակագործութեան մէջ*, «Պատմա-բանասիրական Հանդէս», 1970, թիւ 3:

34. Մ. Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 194-195:

35. Նոյնը, էջ 195:

նորոգման ընթացքում չի փոխուել կամ աղաւաղուել վանքի շէնքերի ճարտարապետութիւնը:

Խաթրավանքի եկեղեցուն կից, նրա հիւսիսային ճակատի արեւմտեան կողմում, այդ կողմի դրան դիմաց, կառուցուած է վանքի զանգակատունը: Այն շինել է 14-րդ դ. առաջին քառորդում Վահրամ իշխանի որդի Սարգիս Եպիսկոպոսը († 1333 թ.), որ կառուցել է նաեւ Դաղիվանքի, Գետամէջի, Ծար գիւղաքաղաքի զանգակատները[36]: Եկեղեցու դրան առջեւ շինուել է ուղղանկիւն, քառորդ գլանի կտրուածք ունեցող թաղով ծածկուած մի նեղ սենեակ, որին հիւսիսից կից է զանգակատունը: Սենեակի կտուրին, զանգակատան եւ եկեղեցու միջեւ կանգնեցուել են երկու գեղաքանդակ խաչքար:

Զանգակատունը Խաթրավանքում ուղղանկիւն, սլացիկ համաչափութիւններով աչտարակ է, որի առաջին յարկը թաղածածկ դարպաս է, իսկ երկրորդ յարկն ունի արեւմտեան կողմում կամարակապ մեծ խորշ, որտեղ կախուել են զանգերը:

Հայաստանի 13–14-րդ դդ. զանգակատները չունէին կանոնիկ մշակուած ճարտարապետական ձեւ, որի պատճառով ամէն մի վանքում նրանք լուծուած են տարբեր եւ ինքնատիպ[37]: Տարբեր է եւ նրանց տեղադրութիւնը՝ սովորաբար զանգակատները կանգնեցուել են եկեղեցիների արեւմտեան կողմում, սակաւ՝ հարաւային: Խաթրավանքում հիւսիսային տեղադրութիւնը եզակի է (Գոշավանքի հիւսիսային կողմում զանգակատունը սկզբանապէս գրատան շէնք է եղել, Քոբերում այն նոյնպէս հիւսիսային կողմում է, սակայն առանձին է կանգնած եկեղեցուց որոշ հեռաւորութեան վրայ): Զանգակատների առաջին յարկը, եթէ նրանք եկեղեցուն արեւմուտքից կից են կառուցուած, սովորաբար կամարակապ բաց սրահ է եւ ծառայում է որպէս անցում դէպի եկեղեցու գլխաւոր մուտքը: Առանձին կանգնած զանգակատներում առաջին յարկերը տարբեր նշանակութիւն են ունենում (մատուռ, դամբարան, գրատուն եւ այլն): Դարպասի եւ զանգակատան զուգակցման միւս յայտնի օրինակը Կարբիում է, որտեղ ըստ շինարարական արձանագրութեան 1338 թ. շինուած զանգակատան (վերին մասը վերականգնուած է 17-րդ դ.) առաջին յարկը դարպաս է: Սակայն Կարբիում երկրորդ յարկը եկեղեցի է, որի վրայ բարձրանում է սիւնաշար գմբէթը: Խաթրավանքի զանգակատունն իր կերպարով աւելի նմանւում է Սպիտակաւոր Աստուածածինի վանքի պարիսպի

---

36. Նոյնը, էջ 207:

37. Ց. Խալփախչեան, *Հայկական Զանգակատների Ճարտարապետութեան Ազգային Առանձնայատկութիւնները*, «Ճարտարապետական Ժառանգութիւն» Ժողովածու, Մոսկուա, 1973,թիւ 21 (ռուսերէն):

արեւմտեան պատի վրայ կառուցուած աշտարակաձեւ զանգակատունը (այն տարբերութեամբ, որ այստեղ կամարակապ խորշը միջանցիկ բացուածք է)։ Խաթրավանքում զանգակատունը, Սպիտակաւորի պէս, հաւանաբար ունեցել է երկթեք ծածկ, որն այժմ չի պահպանուել։ Մուտքը դէպի երկրորդ յարկ այստեղ իրականացուած է հիւսիսից կից քարէ աստիճանների միջոցով։

Զանգակատան դարպասը վանքի համալիրինը չէ, այլ ծառայել է որպէս անցում ցածրում տեղադրուած աշխարհիկ, տնտեսական շէնքերից դէպի եկեղեցին։ Վանքի դարպասը, այժմ կիսաւեր, գտնւում է եկեղեցուց հիւսիս-արեւմուտք։ Այն ուղղանկիւն է, թաղակապ, հիւսիսից-հարաւ ձգուած (2,7 մ. երկարութեամբ)։

Եկեղեցուց հիւսիս, նրա նկատմամբ թեք դրուած է մի ուղղանկիւն շէնք, որ պատով միջից բաժանուած է երկու մասի։ Նրանցից իւրաքանչիւրը հիւսիս-արեւելեան պատից առանձին դռներ ունի։ Շէնքը կիսով չափ խրուած է հողի մէջ եւ նրա կտուրը եկեղեցու բակի փաստօրէն շարունակութիւնն է։ Հիւսիսային, աւելի մեծ սենեակը, որ ծածկուած է շէնքի երկայնական առանցքի ուղղութեամբ ձգուող թաղով, ունի բուխարի, պատերում տնտեսական նշանակութեան խորշեր եւ ակնյայտօրէն բնակելի նշանակութիւն է ունեցել։ Ելնելով նրա չափերի, ողջ շէնքի դիրքից կարելի է ենթադրել, որ այն եղել է վանահօր բնակարանը։ Նրան կից սենեակը, ծածկուած շէնքի ընդլայնական ուղղութեամբ ձգուող թաղով, ունեցել է օժանդակ, տնտեսական նշանակութիւն։

Խաթրավանքում եկեղեցուց հիւսիս-արեւելք գտնւում է մի խոշոր աշխարհիկ շէնք, որի նշանակութիւնը յայտնի չէ արձանագրութիւններից կամ պատմիչների տեղեկութիւններից։ Այն բաղկացած է երկու քառակուսի շինութիւնից, որոնք միմեանց հաղորդակցւում են երկու կամարակապ բացուածքներով։ Շէնքի միակ մուտքը հիւսիս-արեւմտեան պատից է։ Վանահօր շէնքի նման այն կառուցուածքը նոյնպէս կիսով չափ խրուած է գետնի մէջ։ Նրա երկու շինութիւնները հիւսիս-արեւելեան երկայնական պատում տեղադրուած մէկական փոքր լուսամուտներ ունեն։ Շէնքի մուտքը բացւում է դէպի առանձին դահլիճը, որ ծածկուած է գոցուող թաղերով եւ կեդրոնում ունի խոշոր քառակուսի բացուածք՝ մի հսկայական երդիկ, որն առատօրէն լուսաւորում է դահլիճի ներսը։ Երկրորդ՝ խորքի շինութիւնը նոյնպէս ծածկուած է գոցուող թաղերով, սակայն առանց երդիկի։

Խաթրավանքի այս ինքնատիպ շէնքի նշանակութիւնը որոշելիս պէտք է անդրադառնալ վանքի պատմութեանը եւ Յովհաննէս վարդապետի շինարարական արձանագրութեանը։ Խաթրավանքը 13-րդ դ. սկզբում

վերաշինուել է որպէս Խաչենի իշխանութեան մատենադարան եւ թանգարան։ Այստեղ հաւաքուել են Արցախի ձեռագրերը, եւ միաժամանակ գրուել են նորերը, հետեւաբար զուգակցուել է ձեռագրատունը մատենադարանի հետ։ Խաթրավանքը միջնադարեան Հայաստանի հնագոյն մատենադարաններից մէկն է, գուցէ երկրորդը Էջմիածնից յետոյ, որ գոյութիւն ունէր արդէն 5-րդ դ. (սրա ժառանգորդն է Երեւանի Մատենադարանը)։

Խաթրավանքի այս շէնքը իր ճարտարապետութեամբ համապատասխանում է միաժամանակ ե՛ւ գրչութեան կեդրոնին ե՛ւ մատենադարանին։ Առաջին քառակուսի դահլիճը մեծ երդիկով նախատեսուած է եղել որպէս ձեռագրատուն, իսկ խոշոր որմնախորշերով յաջորդ դահլիճը ծառայել է մատենադարան-գրապահոց։ Սա, ի հարկէ, ենթադրութիւն է, բայց մեր կարծիքով բաւական հաւանական, որի համար հիմք է ծառայում հայկական միջնադարեան գրատների շէնքերի առանձնայատկութիւնների համեմատութիւնը Խաթրավանքի այս կառուցուածքի ճարտարապետական յօրինուածքի հետ։ "Մեզ յայտնի գրատունները՝ (Սանահին, Հաղբատ, Գոշավանք, Սաղմոսավանք, Հոռոմոս, Դադիվանք) համարեա քառակուսի են, բրգաձեւ ծածկով եւ հիմնականում երդիկով լուսաւորուող, պատերում խորշերով, ձեռագրերի պահպանման համար[38]։ Ահա այս բոլորն առկայ են եւ Խաթրավանքի նոյնատիպ կառուցուածքում։

Խաթրավանքի միւս շէնքերը, պարիսպը, խցերը չեն պահպանուել։ Եկեղեցուց արեւելք, լերան լանջերը դեռ 19-րդ դ. եղել է մի մատուռ, նրանից ցածր՝ վանքի կալերը[39]։ Վանքի դիմաց, ներքեւում, Թարթառ գետի վրայ Գրիգորի իշխանի կին Ասփան, որ մեծ իշխան Տարսայիճի եւ Մինա Խաթունի դուստրն էր, 14-րդ դ. կամուրջ է կառուցում դէպի Խաթրավանք տանող ճանապարհին եւ նրա մօտ խաչքար կանգնեցնում՝ կամրջի շինարարական արձանագրութեամբ։ Կամուրջը նոյնպէս այժմ չի պահպանուել։

Խաթրավանքի համալիրը միջնադարեան հայ ճարտարապետութեան Արցախի դպրոցի լաւագոյն ստեղծագործութիւններից է։ Յատկապէս արժէքաւոր է նրա եկեղեցու շէնքը, որն իր ինքնատիպ եւ եզակի յօրինուածքով առանձնայատուկ տեղ է գրաւում Հայաստանի եկեղեցական ճարտարապետութեան մէջ։

---

38. Յ. Խալփախչեան, *Հայաստանի Աշխարհիկ ճարտարապետութիւնը* (*Բնակելի եւ Հասարակական Շէնքեր*), Մոսկուա, էջ 155-183, (ռուսերէն)։

39. Մ. Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 196։

THE MONASTERY OF KHAT

BAGRAD OULOUBABIAN, MOURAD HASRATIAN

(Summary)

In the second half of the 12th century, the princely house of Aranshahig was divided into three branches. One of them, the Princedom of Northern Khatchen or Tzar, had the Monastery of Khat as its spiritual and cultural center. During this period the monastery suffered great damage because of Seljuk attacks and an earthquake. But in the early 13th century, under the leadership of Hovhannes Vartapet of Khatchen, the monastery was completely renovated and started to play a central role in the spiritual and cultural life of North-Eastern Armenia. Hovhannes Vartabed built a cathedral in place of one of the old churches, established a library and founded a center for the copying of manuscripts.

The complex of the Monastery of Khat, which includes a cathedral, secondary churches, chapels and living quarters and administrative buildings, is one of the most prominent expressions of the Artsakh School of the Armenian architecture. The authors have presented here for the first time the metrographs of the monastery and discuss its architectural characteristics, and interprete the relief decorations of the four main pillars of the cathedral as well.